Արձանագրություն N 3

ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 04 մարտի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Պետրոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Շ. Ալեքսանյանը | - | Գլխավոր հաշվապահ |
| Շ. Գրիգորյանը | - | ՆԻՎ-ի գլխավոր մասնագետ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 10փ, 6տ),

1.2. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն -ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնությունը, վճարման պահանջագիրը, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիան: «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև հարավերով նախատեսված հավելված թիվ 5-ը, նախկինում կատարված երկու պայմանագրեր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ների հետ, կատարողական ակտերը, հարկային հաշիվները:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է` 9 198 000 (ինը միլիոն մեկ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ:

Հանձնաժողովը փիքսելով, որ համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի մասնակիցը պետք է ընդրկված լիներ Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում, իսկ միակ մասնակիցը` «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն, ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի համար ընդունելի իրավասու աուդիտորների ցանկում:

Որոշեց`

2.1. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության գնման մասնակցի հայտը համարել հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանող, և մերժել:

2.2. ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության գնման ընթացակարգը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, հայտարարել չկայացած:

2.3. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար` Ա. Պետրոսյանին`

- ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 04/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության գնման ընթացակարգը Չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակել www.gnumner.am կայքում, տեղեկագրում:

Ընդունվել է որոշում` կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ` Ա. Պետրոսյան

Անդամներ` Շ. Ալեքսանյան

Շ. Գրիգորյան

Քարտուղար` Ա. Պետրոսյան